

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

5-րդ դասարան

Մ Ա Յ Ր Ե Ն Ի

ԹԵՍՏ 4

Շրջան, քաղաք \_\_\_\_\_

Ուսհաստատություն \_\_\_\_\_

Դասարան \_\_\_\_\_

Ա. Ա. Հ. \_\_\_\_\_

Ամսաթիվ \_\_\_\_\_

*Սիրելի՛ աշակերտ*

Թեստ-գրքույկն ընդգրկում է 20 առաջադրանք:

1-4-րդ, 6, 7-րդ, 14-րդ, 16-րդ և 20-րդ առաջադրանքները լրացնել:

5-րդ, 11-րդ և 19-րդ առաջադրանքներում կատարել համապատասխանեցում:

8-10-րդ, 12, 13-րդ, 15-րդ և 17, 18-րդ առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ: Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը (համարները) վերցնել շրջանակի մեջ: Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, նշված պատասխանի համարի վրա դնում եք X նշանը ~~3~~ և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

Թեստ գրքույկի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալը՝ 0:

Թեստ գրքույկի առավելագույն միավորը 20:

Աշխատանքի կատարման համար տրվում է 50 րոպե:

*Ցանկանում ենք հաջողություն*

2018 -2019

## Թեստ 4

### 1-4-րդ առաջադրանքները լրացնել

1. Հայերենը ունի 6 ձայնավոր հնչյուն, դրանք են՝ \_\_\_\_\_:
2. Մի քանի նախադասություններ , որոնք մեկ նյութի մասին են, միանալով կազմում են \_\_\_\_\_:
3. Բառերի ճիշտ գրությունը կոչվում է \_\_\_\_\_:
4. Արտահայտությունը գրել մեկ բառով:

զանգի ձայնը - \_\_\_\_\_

5. Համապատասխանեցնել.

#### Բառ

- 1) մեղմ
- 2) բյուր

#### Վերջածանց

- ա) ավոր
- բ) ային
- գ) անոց
- դ) որեն

Պատասխան՝ 1-\_\_\_\_, 2-\_\_\_\_

### 6,7-րդ առաջադրանքները լրացնել

6. Թվականը գրել տառերով:

89 - \_\_\_\_\_:

7. «Մեր այբուբենը» ստեղծագործության հեղինակն է՝ \_\_\_\_\_:

### 8,9-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ

8. Ո՞ր բառերում են տառերն ու հնչյունները քանակով իրար համապատասխանում:

- 1) մտովի, 2) ընդհանուր, 3) փոփոխ, 4) օրհանգ, 5) ձագար

9. Ո՞ր բառերում է գրվում *-եա-* երկհնչյունը:

- 1) հր..., 2) սառուց...լ, 3) այժմ...կան, 4) հոգ...կ, 5) առօր...կան, 6) պաշտոն..., 7) քվ...րկել

10. Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:

Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *-ո-* :

- 1) ապ...րինի, մի ...րինակ, ան...րոշ
- 2) պահած..., բազմ...տանի, հմտ...րեն
- 3) ընդ...ստ, արևազ...ծ, պնդ...ղակ
- 4) հ...դս, արագ...տն, ապ...րինի

11. Համապատասխանեցնել.

*Քառ*

*Քաղթողնված տառ*

- 1) արյուն...ուշտ
- 2) կա...կանծել
- 3) ակնա...անք
- 4) կամուր...

- ա) չ
- բ) ռ
- գ) ժ
- դ) ջ
- ե) ղ
- զ) ծ
- է) խ
- ը) ռ

Պատասխան՝ 1- \_\_\_\_, 2- \_\_\_\_, 3- \_\_\_\_, 4- \_\_\_\_

*12, 13 -րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ*

12. Նախադասությանը համապատասխանող բառն է՝

1) *Պղտոր*, 2) *կեղտոտ* երկնքում փայլում էր պայծառ արևը :

13. Նախադասության մեջ փոխաբերական իմաստ ունեցող բառն է՝

Այդ առավոտ արեգակը 1) *հետզհետե* դուրս եկավ հորիզոնից և կրկին անհայտացավ:  
2) *դողդողալով*  
3) *կամաց-կամաց*

14. *Լրացնել.*

Աչքից ընկնել դարձվածքի իմաստն է՝ \_\_\_\_\_ :

15. *Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:*

Կուլ չերթանք այս ահեղ լափումին,  
Թույլ չտանք մեր լեզուն ավերեն,  
.....

Քաղթողնված տողած տողն է՝

- 1) Եկ խոսենք, եղբայր իմ,  
Հայերեն...
- 2) Եկ խոսենք, մի՛շտ խոսենք  
Հայերեն...
- 3) Եկ վառենք ու վառվենք  
Հայերեն...

16. *Լրացնել.*

Հանապազօր բառի բացատրությունն է՝ \_\_\_\_\_ :

17, 18- թղ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ

17. Ո՞ր բառակապակցություններն են դարձվածքներ:

- 1) քաղցր աչքով նայել, 2) աչքերը հոգնել, 3) ծնկի իջնել, 4) նեղության մեջ ընկնել, 5) գիրք առնել, 6) թև առնել, 7) հոգին ազատել

18. Երախտիք բառին հականիշ են՝

- 1) չարիք, 2) վատություն, 3) բարիք, 4) երախտամոռություն, 5) բարերարություն

19. Համապատասխանեցնել.

Ստեղծագործություն

- 1) «Խոսք իմ որդուն»
- 2) «Երեք խորհուրդ»
- 3) «Աստղամանուկը»

Հեղինակ

- ա) Հանս Բրիստիան Անդերսեն
- բ) Օսկար Ուայլդ
- գ) Ղազարոս Աղայան
- դ) Էդվարդ Միլիտոնյան
- ե) Վիլյամ Սարոյան
- զ) Սիլվա Կապուտիկյան

Պատասխան՝ 1- \_\_\_\_, 2- \_\_\_\_, 3- \_\_\_\_

20. Լրացնել.

Ըստ «Եղեգնուհին» հեքիաթի՝

« -Սիրուն աղջիկ, մենք քեզ հետ խոսելուց չենք կշտանում. քեզ հետ ապրողի համար տարին մեկ ժամվա պես կանցնի, լավ կլինի, ուրեմն, որ շուտ ասես մեզ, թե ո՛վ ես, որտեղի՞ց ես ընկել այստեղ, ովքե՛ր են քո հայրն ու մայրը և որտե՛ղ են կենում»:

Խոսքերը պատկանում են \_\_\_\_\_ հերոսին:

Լրացնում է ստուգողը

Ընդհանուր միավորը	
Գնահատականը 10 բալանոց սանդղակով	

Ստուգող՝ \_\_\_\_\_

Ա.Ա.Հ

ստորագրություն

